

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքի ավագանին համայնքների գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով որոշում է կայացնում համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամության վճարները մուծելու մասին: Ներկայումս Հայաստանում ստեղծվել և գործում են 12 համայնքների միություններ, որոնցից 4-ը Տավուշի, 4-ը Սյունիքի, 2-ը Արարատի, 1-ը Արագածոտնի և 1-ը Լոռու մարզերում: Ստորև ներկայացնում ենք Բերդի համայնքների միությունը:

Բերդի համայնքների միություն

Բերդի համայնքների միությունը /ԲՀՄ/ հիմնադրվել է 2003 թվականին և միավորում է Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի բոլոր 17 համայնքները (խորհրդային տարիներին դրանք կազմում էին Շամշադինի, այնուհետ Տավուշի վարչական շրջանը), որոնցից 1-ը քաղաքային, իսկ 16-ը գյուղական համայնքներ են: 16 համայնքներ ունեն սահմանամերձ համայնքի կարգավիճակ, որոնց ընդհանուր սահմանը հարևան Ադրբեջանի հետ կազմում է 180 կմ: ԲՀՄ-ի գրասենյակը գտնվում է Բերդ քաղաքում:

ԲՀՄ-ն ստեղծվել է մասնակից համայնքների որոշակի խնդիրների համատեղ լուծման, համայնքների գործունեության համակարգման, համայնքային իրավունքների պաշտպանության և տեղեկատվության փոխանակման, համայնքների զարգացման ուղիների ընտրությանը աջակցման և բնակչության իրազեկման նպատակներով: ԲՀՄ-ի կառավարման բարձրագույն մարմինը կազմված է անդամ համայնքների ղեկավարներից և կոչվում է ընդհանուր ժողով: Միության գործադիր մարմինը գործադիր տնօրենն է, որն ընտրվում է միության ընդհանուր ժողովում 3 տարի ժամանակով: Միության ֆինանսական միջոցների գոյացման կայուն աղբյուր են հանդիսանում միայն մասնակիցների մուտքի վճարները և անդամավճարները:

ԲՀՄ-ի գործունեության առանցքը նախորդ տարիներին եղել է միության անդամ համայնքների միջև կապերի ամրապնդումը, փորձի փոխանակման կազմակերպումը, օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ համայնքներին տեղեկատվության տրամադրումը, աշխատակազմերի անդամների կարողությունների հզորացումը, համայնքների նախաձեռնությունների և շահերի ներկայացումը տեղական և միջազգային կազմակերպություններում, բազմակողմանի աջակցություն անդամ համայնքների ու միջազգային կազմակերպությունների միջև կապերի հաստատմանը և այդ շրջանակներում ծրագրերի իրականացմանը:

2005թ. հունիսից, «Շրջակա միջավայրը և նրա պաշտպանվածությունը հարավկովկասյան երեք երկրներում» ծրագրի շրջանակներում, Բերդի համայնքների միությանը կից գործել է շրջակա միջավայրի հարցերով հանրային տեղեկատվական կենտրոնը, որն իրականացրել է բազմաբնույթ աշխատանքներ.

- Տարածաշրջանում բնապահպանական տեղեկատվության հավաքում, վերլուծություն և ամփոփում,

Բերդի համայնքների միության անդամ համայնքների մասին տվյալներ

Համայնք	Համայնքի վարչական տարածքը (հա)	Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից (կմ)	Համայնքի հեռավորությունը նախկին շրջկենտրոնից (կմ)	Սահմանա-մերձ	Մշտական Բնակչությունը, ըստ 2001թ.-ի մարդահամարի (մարդ)
Բերդ	3153.5	69	0	Այո	8810
Այգեձոր	2358	95	26	Այո	2701
Այգեպար	70	79	15	Այո	609
Արծվաբերդ	3685	86	17	Այո	3320
Թովուզ	2654	64	5	Այո	1656
Իծաքար	228,3	80	11	Ոչ	380
Ծաղկավան	1535	53	11	Այո	996
Մոսեսգեղ	2863	88	19	Այո	2212
Նավուր	1043,4	42	9	Այո	1238
Ներքին Կարմիր աղբյուր	1812	69	10	Այո	1061
Նորաշեն	1089	80	11	Այո	1792
Չինարի	968	102	33	Այո	1253
Չինչին	927	84	15	Այո	713
Չորաթան	1977,5	90	21	Այո	1088
Պառավաքար	3475	45	24	Այո	1730
Վարազավան	803	49	20	Այո	748
Վերին Կարմիր աղբյուր	1994	77	8	Այո	1948

- Բնապահպանական գործունեության համակարգում,
- Նավուր, Չինչին և Իծաքար համայնքների 40 երեխաների համար էկո ճամբարի կազմակերպում՝ համագործակցելով ԱՄՆ–ի «Խաղաղության կորպուսի» և «Կանաչ ճանապարհի սերունդներին» ՀԿ–ի հետ,
- «Բերդ-Տավուշ ջրատարի ակունքի սանգոտու ցանկապատում» ծրագրի իրականացում «Գարուն վերածնունդ» ՀԿ–ի հետ համատեղ,
- «Էկո զբոսայգու հիմնում» Նավուր համայնքի հետ:

2005թ. ԲՀՄ-ն ունեցել է 14 լիազույմար նիստեր, որոնց ընթացքում քննարկվել է 54 հարց և կայացվել է 73 որոշում: Տարվա ընթացքում միության բոլոր անդամ համայնքները ներկայացրել են ավելի քան 60 ծրագրային փաթեթներ, որոնք հիմնականում վերաբերվում էին համայնքային ենթակառուցվածքների վերանորոգմանը և գյուղատնտեսության զարգացմանը:

Համագործակցելով միջազգային կազմակերպությունների և պետական մարմինների հետ, իրականացվել են ԲՀՄ ընդհանուր ժողովի կողմից առաջնահերթություն ստացած 49 ծրագրային աշխատանքներ. վերանորոգվել և խճապատվել են ներհամայնքային ճանապարհներ, կառուցվել են ջրահեռացման համակարգեր, խմելու ջրի ներքին ցանցեր, վերանորոգվել են

ջրագծեր, իրականացվել է ծառատունկ 7 հա-ի վրա, իրականացվել է գերեզմանատների ցանկապատում և վերանորոգում, գազատարի պաշտպանություն հետագա փչացումից, իրականացվել է մեկ մանկապարտեզի ապակեպատում և երկու մանկապարտեզների տանիքների հիմնանորոգում, վերանորոգվել է մեկ ակունքի շենք, 64 անապահով ընտանիքներ ստացել են ամանորյա նվերներ: Ծրագրերի արդյունքներից ուղղակիորեն օգտվել են բոլոր 17 համայնքներից 76895 մարդ, ստեղծվել է 1227 ժամանակավոր աշխատատեղ:

Կատարված աշխատանքների հաջողության հիմնական գրավականը համայնքների պատրաստակամությունն է, միության ակտիվ համագործակցությունը բոլոր շահագրգիռ օղակների հետ:

2005 թ. Բերդի համայնքների միության կողմից իրականացված ծրագրերը

h/h	Ծրագրի անվանումը	ՍՏՀՀԿԿԾ ներդրում	այլ ներդրում	Համայնքի ներդրում	ՀՊԾ ներդրում	Ծրագրի ընդհանուր արժեքը	Օգտվողներ	
		գումար և պարեն	գումար	գումար	նյութ և պարեն	գումար	անու- ղղակի	ուղղա- կի
1	2005թ. սնունդ աշխատանքի դիմաց, 16 ծրագրեր	16452950. 6		15653296		32106246.6	429	27113
2	Ծառատունկի 3 ծրագրեր	1234198		384930		1619128	54	2337
3	2005թ. դրամաշնորհային 5 ծրագրեր/7մլն/	12278517. 8		3432670		15711187.8	117	11228
4	2005թ. դրամաշնորհային 5 ծրագրեր/6մլն/	5998548		4155140	4773060	14926748	164	2467
5	2005թ. դրամաշնորհային համատեղ 4 ծրագրեր/ՀՊԾ/	29800	3701301	5503415	3699780	12934296	115	4931
6	2005թ. սնունդ մանկապարտեզնե րին /17 մանկապարտեզ/	1417505.3				1417505.3		810
7	2005-2006թթ. դրամաշնորհային 12 ծրագրեր/9.810 մլն/	23322155. 35	5371600	7456370		36150125.3	310	14501
8	2005-2006թթ. դրամաշնորհային 3 ծրագրեր/էկո. և ԱԻ/	3757620	167700	1198820	642600	5766740	38	13508
	ԸՆԴԱՄԵՆԸ	64491295	9240601	37784641	9115440	120631977	1227	76895

Սամվել Հովսեփյան
Բերդի համայնքների միության գործադիր տնօրեն